# ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

## Ի՞ՆՉ Է ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ

Գ Գենդերազգայուն բյուջետավորումը (ԳԶԲ) կառավարման գործիքակազմ է, որն օգտագործվում է բյուջետային եկամուտների և ծախսերի այնպիսի վերլուծության և վերակազմավորման համար, որ կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների բազմազան կարիքները համաչափորեն ներկայացված լինեն բյուջետային հոդվածներում՝ ապահովելու Կայուն զարգացման նպատակների իրագործումը, ինչպես նաև մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումները: Այն նաև կանանց և տղամարդկանց միջև հավասարության հասնելու ռազմավարություն է, որն իր կիզակետում է պահում հանրային ռեսուրսների հավաքագրման և հումանիտար, զարգացման և խաղաղության [ապահովման] հանգուցակետերը:

ԳԶԲ-ի մեջ չի ներառում կանանց և տղամարդկանց համար առանձին բյուջեի ստեղծումը կամ շահառուների բաժանումը՝ ըստ նրանց սեռի: Փոխարենը այն ներառում է գենդերային ուղղվածությամբ բյուջետային մի գործընթաց, որում բյուջեի հատկացումը համապատասխանում է պետության ունեցած գենդերային իրավահավասարության քաղաքականությանը: ԳԶԲ-ն ծրագրի բյուջետավորման անքակտելի մասն է, այն ներառում է արդյունավետ և վերջնարդյունքին ուղղված հանրային ծառայություններ, ինչն օգնում է մեզ մշտադիտարկելու, թե ինչպես են այդ

## Ի՞ՆՉ Է «ԵՄ-Ն ՀԱՆՈՒՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ»

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «ԵՄ-Ն հանուն գենդերային իրավահավասարության աջակցության ծառայությունը» պահանջարկաստեղծ աջակցություն է տրամադրում Արևելյան գործընկերության[1] ծրագրի կառավարություններին[2] և ԵՄ պատվիրակություններին՝ տարածված գենդերային խնդիրների վերաբերյալ քաղաքականության մշակման և բարեփոխումների իրականացման հարցերում՝ ապահովելու կանանց և տղամարդկանց համար գործուն արդյունքի մատակարարումը:

## ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԸ

Սույն ամփոփագիրը կարող է գործածել իրավական ակտեր, քաղաքականություններ, ծրագրեր և նախագծեր մշակող ցանկացած անձ (կառավարական հաստատությունների, ԵՄ պատվիրակությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աշխատակիցներ և այլ միջազգային զարգացման գործընկերներ), ում նպատակը Արևելյան գործընկերության երկրների և ոչ միայն այդ երկրների մարդկանց օգտակար լինելն է: Այն կարող է նաև գործածվել այդ երկրների իրավական շրջանակներում, քաղաքականության մշակման և ծրագրերի պատրաստման հարցերում հետազոտություններ անցկացնող և/կամ զեկուցող հետազոտողների, ակադեմիական համայնքի և լրատվամիջոցների կողմից:

[1] Բելառուսում Բարեխփոումների աջակցության ծառայությունը օժանդակում է միայն ԵՄ պատվիրակությանը
[2] Արևելյան գործընկերությունը համատեղ նախաձեռնություն է, որում ներգրավված են ԵՄ-ն, դրա անդամ պետությունները և Արևելաեվրոպական վեց գործընկեր երկրները՝ Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա

EUROPEAN UNION FOR ARMENIA

**Եվրամիությունը հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհան**

NIRAS
իրականացվում է niras-ի կողմից

Սույն հրատարակությունը ֆինասնավորել է Եվրոպական Միությունը: Դրա բովանդակության միակ պատասխանատուն NIRAS-ն է, և պարտադիր չէ, որ այն արտացոլի Եվրոպական Միության տեսակետը:

հանձնառությունները իրականացվում, խթանել թափանցիկությունը և պայքարել կոռուպցիայի դեմ:

Ըստ էության ԳԶԲ նշանակում է գենդերային մեյնսթրիմինգ բյուջետային գործընթացում: Այն բոլոր կանանց և տղամարդկանց վրա բյուջետավորման ազդեցությունը կանոնավոր կերպով գնահատելու և վերլուծելու հնարավորություն է ընձեռում, որոնք հիմնավորվում են համապատասխան քաղաքականությունների վերլուծությամբ և հարմարեցմամբ, որպեսզի կրճատվեն գենդերային անհավասարությունը և անարդարությունը:

Բյուջետավորման այս տեսակը խթանում է կառավարությունների հաշվետվողականությունը՝ հանրային ռեսուրսները նպատակային, շահառուների՝ կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների կարիքներին համապատասխան գործածելու առումով: Այն նաև բոլոր հանրային քաղաքականություններում կիրառում է գենդերային մեյնսթրիմինգը՝ ըստ միջազգային համաձայնագրերի և ազգային զարգացման ռազմավարությունների:

Պարզ ասած՝ ԵՄ-ն խրախուսում է գենդերազգայուն բյուջետավորումը՝ որպես Պլան III-ի մաս.

- Ապահովելու համար ֆինանսական պլանավորման և բյուջետավորման հաշվետվողականությունը, արդյունավետությունը, թափանցիկությունը և արդարությունը;
- Պայքարելու համար կոռուպցիայի դեմ և յուրաքանչյուր ներդրման դեպքում ավելի լավ արժեք ապահովելու համար:
- Ավելացնելու համար գենդերազգայուն մասնակցությունը բյուջետավորման գործընթացում: Օրինակ՝ քայլեր ձեռք առնել բյուջեի պատրաստման ընթացքում կանանց և տղամարդկանց հավասարաչափ ներգրավման ուղղությամբ՝ որպես մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման մաս:
- Ապահովելու համար բյուջետային հատկացումը կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների միջև՝ հաշվի առնելով նրանց բազմազան կարիքները և շահերը:
- Նվազեցնելու համար գենդերային տարբերությունները, խթանելու համար գենդերային հավասարությունը և կանանց իրավունքները, ինչպես նաև տնտեսական զարգացումը:

Սույն վերլուծությունը պետք է կատարել բոլոր մակարդակներում՝ գենդերային հարցերը հիմնուղի դարձնելով պետական, տարածաշրջանային և տեղական բյուջեներում: Գենդերային բյուջետավորման գործիքակազմը կարող է օգտագործվել նաև մասնավոր սեկտորի ներդրումներում կամ ծրագրային բյուջեներում: Բյուջետային գործընթացի բոլոր փուլերում քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը կարևոր է՝ գենդերազգայուն բյուջետավորումը խթանելու առումով:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) կարող են տրամադրել բյուջեի անկախ վերլուծություն, ներկայացնել առաջարկներ բյուջեի պլանավորման փուլում, կազմակերպել հանրային լսումներ բյուջեի ընդունման փուլում, դիտորդի դեր կատարել բյուջեի կատարողականի մշտադիտարկման և գնահատման ժամանակ և տեղեկատվություն տարածել ընդհանուր հասարակությանը՝ խթանելու մարդակենտրոն, արդար, արդյունավետ և թափանցիկ բյուջետավորումը:

Միևնույն ժամանակ, լավ մշակված և մասնակցային իրավական բյուջետային գործընթացի մեխանիզմներ է պետք ներդնել, իսկ քաղաքացիական հասարակությանը պետք է զորացնել անհրաժեշտ գիտելիքով և գործիքակազմով՝ ֆինանսական որոշումների վրա ներազդեցություն ունենալու համար:

## ԻՆՉՈ՞Ւ Է ԿԱՐԵՎՈՐ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ

Եվրոպական Միության Գենդերային գործողությունների պլանի (2021-2025 Պլան III) ընդունման ժամանակ, որը կոչ էր անում ստեղծել գենդերահավասար աշխարհ, Եվրոպական հանձնաժողովը խոստացավ ֆինանսների հանրային կառավարմանն աջակցելով առաջ մղել գենդերազգայուն բյուջետավորումը: Պլանը պահանջում է ունենալ հանրային ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության

(ՀԾՖՀ) գնահատման նոր զեկույցներ՝ գենդերազգայունության մոդուլ ներառելու համար:

Այդ պատճառով է, որ գենդերազգայուն բյուջետավորումը Կայուն զարգացման նպատակների 5.c.1.2 ցուցիչի մաս է (այս ցուցիչով չափում են «գենդերային իրավահավասարության և կանանց զորացման համար հանրային հատկացումներ կատարող և դրանց հետևող համակարգ ունեցող երկրների հարաբերակցությունը»): Այն կապում է գենդերային իրավահավասարության քաղաքականությունը և օրենսդրական պահանջները՝ դրանց իրագործման համար ռեսուրսների հատկացման հետ:

Գենդերազգայուն բյուջետավորումը կառավարման ազդեցիկ գործիքակազմ է, որն օգնում է առաջ մղել գենդերային իրավահավասարությունը և բարելավել առանձնահատուկ սպառողներին ուղղված հանրային ծառայությունների որակը: Այն նաև հեշտացնում է աղքատության կրճատումը, մեծացնում է ռեսուրսների արդյունավետությունը և թիրախային բնակչության բարեկեցությունը: Արդյունքում այն հանգեցնում է ավելի կայուն և ներառական աճի:

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ

ԳԶԲ-ի **իրականացման** համար անհրաժեշտ են մի շարք գործողություններ օրենսդրական և բյուջետավորման բնագավառներում: Կարևոր բաղադրիչ է ունենալ սեռերով տարանջատված տվյալներ կամ ապահովել դրանցով, կամ աջակցել գործընկերներին, որ ներդնեն այն: Էական նախապայման է կանոնադրական շրջանակի մշակումը և պետական գենդերազգայուն բյուջետավորման մեթոդաբանության առկայությունը, ինչպես նաև գենդերահեն բյուջետային վերլուծության ցուցիչների համակարգը: Հաշվի առնելով, որ բյուջետային որոշումները միշտ քաղաքական են, ԳԶԲ-ի համար կենսական անհրաժեշտություն է գենդերային իրավահավասարությունը հանրային ֆինանսների կառավարման մեջ ընդգրկելը:

Գենդերազգայուն բյուջետավորման իրականացման համար **հիմնական թույլատրող գործոնների** մեջ են ներառված հետևյալ պայմանները.

- Հատուկ գենդերային իրավահավասարության քաղաքականություն և գենդերային իրավահավասարությունը առաջ մղող պետական ինստիտուցիոնալ մեխանիզմներ
- Գենդերային հարցերը բյուջետավորման գործընթացներում ընդգրկելու քաղաքական կամք:
- Գենդերազգայուն վիճակագրություն, որն ապահովում է առանձնահատուկ համատեքստում բյուջետային որոշումների հարցում ավելի լավ կողմնորոշվելու և գենդերային անհամաչափությունը շտկելու փաստարկային հիմք:
- Գենդերային իրավահավասարության հարցերում տեղեկատվություն և տեղեկացվածության բարձրացում, հատկապես գենդերային հավասարության պետական քաղաքականությունն ավելի լավ ըմբռնելու հարցում:
- Տղամարդկանց և կանանց՝ բյուջետավորման գործընթացում հավասար մասնակցության հնարավորություն:

ԳԶԲ-ի իրականացման համար անհրաժեշտ են հանրային ֆինանսների կառավարման ինստիտուտներ, համակարգեր և գործընթացներ, որոնք աչքի առաջ են պահում կանանց և տղամարդկանց առանձնահատուկ կարիքները, ինչպես նաև զանազան ներազդեցությունները, որ ֆինանսական քաղաքականությունը և պրակտիկան ունեն տղամարդկանց և կանանց վրա:

Անշուշտ լավագույն լուծումը կլիներ եթե ԳԶԲ-ն հիմնուղի լիներ բյուջետավորման ամբողջ շրջափուլի ընթացքում՝ բյուջեի պլանավորումից մինչև կատարում, հետևում, մշտադիտարկում և գենդերազգայուն ֆինանսական քաղաքականության և դրանց՝ կանանց և տղամարդկանց վրա ազդեցության ՕԳԳ-ի և արդյունավետության գնահատում:

Բյուջետային պլանավորման փուլում ԳԶԲ-ն ներառում է.

- Բյուջետային քաղաքականության առաջարկների՝ գենդերային հավասարության՝ ներառյալ տղամարդկանց, կանանց և այդ կատեգորիայի ենթախմբերին ծառայությունների մատուցման ներազդեցության գնահատումը
- Իրենց բյուջետային պարտականություններում գենդերային հարցերին անդրադառնալու

հրահանգ պարունակող շրջաբերականի պատրաստումը բյուջետային միավորների համար
- Սեռերով տարանջատված ծառայությունների մատուցման կատարողականի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող բյուջետային փաստաթղթերի պատրաստում
- Օրենսդրական տեսանկյունից ծախսերի վրա գենդերային ազդեցությունը, բյուջեի առաջարկների և եկամուտների քաղաքականության և ծրագրերի մանրազնին ուսումնասիրում

**Բյուջեի կատարողական փուլում** ԳՋԲ-ն ներառում է.

- Ծախս այնպիսի ծրագրերի վրա, որոնք անմիջականորեն նպատակաուղղված են և՛ կանանց, և՛ տղամարդկանց գենդերային հավասար իրավունքներ և հնարավորություններ ապահովելուն (ուղիղ հատկացումներ)
- Կանանց և տղամարդկանց առանձնահատուկ թիրախային խմբերի կարիքները հաշվի առնող գենդերազգայուն հանրային ծառայությունների վրա ծախսեր կատարելը (ուղիղ ֆինանսավորում)
- Գենդերային մոտեցումներ ընդգրկող սեկտորային ծրագրերի վրա ծախսեր կատարելը (անուղղակի ֆինանսավորում)

Այս տեսակի ծախսերին **հետևումը** պահանջում է իմաստալից և հիմնավորված մեթոդաբանություն, որպեսզի հնարավոր լինի տարբերակել, թե ինչպես են կանայք և տղամարդիկ շահում հանրային հատկացումներից և թե ինչ ազդեցություն են ունենում այդ հատկացումները նրանց վրա:

**Հաշվետվության և զեկուցման փուլում** բյուջետային քաղաքականության իրականացման մասին Կառավարության զեկույցը պետք է ներառի բյուջետային հատկացումներ՝ գենդերային հավասարության և գենդերազգայուն հանրային ծառայությունների համար:

**Արտաքին վերլուծության և աուդիտի՝** բյուջետային շրջափուլի վերջին հատվածում պետք է վերանայել հանրային ֆինանսները և հանձնառություններ թողարկել՝ ապագա գործողությունները լրացնելու համար:[3]

Գործնականում, քաղաքական համատեքստից, լուսաբանման մակարդակից և բյուջետավորման փուլից կախված, ԳՋԲ նախաձեռնությունները կարող են կենտրոնանալ տարբեր հարցերի վրա և ընդունել տարբեր ձևեր: Նման նախաձեռնությունները

- Կարող են նշանակել առանձին փաստաթղթի պատրաստում, որը ներկայացվում է բյուջեի հետ մեկտեղ
- Կարող են մշտականորեն ընդգրկվել բաժանմունքային գործընթացներում և ծրագրային վերլուծություններում
- Կարող են լինել պաշտոնական բյուջետային առաջարկներ կամ առանձին փաստաթղթեր՝ կազմած ոչ-կառավարական շահագրգիռ կողմերից

## ԴՐԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

**Ավստրիան** աշխարհի երեք երկրներից մեկն է, որի սահմանադրությունն ընդգրկում է գենդերազգայուն բյուջետավորում: ԳՋԲ-ն համարվում է կառավարության քաղաքականությունների գենդերային մեյնսթրիմինգի կարևոր գործիք, որը հստակ պարտականություններ է նախատեսում, կառավարությանը հաշվետու է դարձնում իր գենդերային քաղաքականության հանձնառություններում:

Իրենց բյուջետային փաստաթղթերում դաշնային նախարարությունները պետք է հստակորեն թիրախավորեն կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը: Սա նշանակում է գենդերային նպատակների, միջոցների և ցուցիչների ընդգրկում ռազմավարության զեկույցներում, դաշնային բյուջեում և հավելվածներում՝ համաձայն Դաշնային բյուջեի ակտի պահանջների:

**Ուկրաինան՝** սկսած 2023թ-ից, առաջնորդվում է գենդերազգայուն բյուջետավորման նախաձեռնություններով: Կարևոր

[3] PEFA Secretariat, *Supplementary Framework for Assessing Gender Responsive Public Financial Management*. Washington DC, January 2020, https://www.pefa.org/gender

առաջընթաց է գրանցվել Ուկրաինայում ԳՋԲ ծրագրում՝ Շվեդական միջազգային զարգացման համագործակցության գործակալության (ՍԻԴԱ) օժանդակությամբ և իրականացված NIRAS-ի կողմից՝ 2014 - 2020 թթ ընթացքում: Ուկրաինայի Ֆինանսների նախարարությունը, որը ծրագրի հիմնական շահառուն է, և՛ պետական, և՛ տեղական մակարդակներում բոլոր փուլերում ներդրել է գենդերազգայուն մոտեցում: Նախարարությունը բյուջետային գործընթացը կառավարող կարգավորումներում գենդերային մեյնսթրիմինգ է կատարել: Գործընթացը ներառում է բյուջեի նախագծի և տեղական բյուջետային կանխատեսումների Բյուջետային հռչակագրի պատրաստումից և քննարկումից մինչև բյուջեի կազմումը, նախագծի քննարկումը և Ուկրաինայի Պետական բյուջեի մասին օրենքի ընդունման ողջ տիրույթը:

Այն նաև ներառում է բյուջեի կատարումը, պատրաստումը և բյուջեի կատարողականի զեկույցի քննարկումը և դրանց հիման վրա ընդունված որոշումները:

**Ադրբեջանի** Ֆինանսների նախարարությունը հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների իրականացման ժամանակ ներառել է վերջնարդյունքի վրա հիմնված բյուջետավորում: Բյուջետավորման նման բարեփոխումը գենդերազգայուն բյուջետավորում ներդնելու հնարավորություն է տալիս:

**Վրաստանի** կառավարության 2018 թ. ապրիլի 17-ի «Մարդու իրավունքների պաշտպանության գործողությունների պլան 2018-2020 թթ» թիվ 182 բանաձևը ընդգծում է գենդերային իրավահավասարության սկզբունքները բյուջետային գործընթացներում, [տեխնիկական] կարողությունները, օրենքի նախագծերում գենդերային վերլուծությունը, 2019 և 2020 թթ Վրաստանի պետական բյուջեն, հանձնարարականներ պատրաստելը և դրանք վերջնական փաստաթղթերում ընդգրկելը: Նպատակը գենդերային իրավահավասարության սկզբունքները պետական քաղաքականության մեջ ներառելն է:

**Մոլդովայի Հանրապետությունում** ԳՋԲ-ի վերաբերյալ մի շարք վերապատրաստումներ են կազմակերպվել Ֆինանսների նախարարության, Կրթության և հետազոտությունների նախարարության և Տարածքային գանձապետարանների համար: Նպատակը որոշումներ կայացնողներին զգայունացնելն էր և բյուջետային գործընթացներում ԳՋԲ-ի ներդրումը պատրաստելը:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Զարգացման աջակցության կոմիտեն (ՏՀՋԿ-ԶԱԿ) վերլուծել է գենդերազգայուն բյուջետավորման լավագույն օրինակները: Այդ փաստաթուղթը ներկայացնում է գենդերազգայուն բյուջետավորման հաջող իրականացման հիմնական ընդհանուր գծերը ՏՀՋԿ անդամ երկրներում և ՏՀՋԿ-ի շրջանակներում ԳՋԲ մշակող և իրականացնող այլ երկրների հետ:

## ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ՝

- ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության՝ բարեփոխումների աջակցության ծառայության մասին
- Գենդերային հավասարության գրադարան
- EU Neighbours East կայք

Այցելեք Գենդերային հավասարության գրադարան:

© Եվրոպական միություն 2023